

«Կայսերական կառավարութիւնը չի հասկընար, թէ ի՞նչ յանցանք է գործեր ընդդէմ արդարութեան ու քաղաքակրթութեան, որ զինքը կը դնեն այնքան նուաստացուցիչ կացութեան մէջ — կացութիւն մը, որ անօրինակ է այս աշխարհում»...

Այս տոնով կը խօսէր «Ներխուստարդ թիւրքիոյ» եւ «Մեծն Միթհազէի» կառավարութիւնը, որ եկեր էր բարձրացնելու, այնուայնչու թիւրքիան: Նոյն թալէաթի եւ էնվէրի յպիւրջ տոնն է... Բուլղարիոյ սարսափները ոչինչ բան մ'էին:

Վերջապէս, ապրիլ 24-ին (1877 թ.) Ռուսաստանը պատերազմ՝ յայտարարեց թիւրքա-

յին — եւրոպական եւ ասիական ճակատն'ը ու վրայ:

Հայաստանի մէջ ուսական զօրքը յառաջ խաղաց սրարշաւ ու շանթի պէս հարուածելով...

(Շատ աւելի աջողակ՝ քան 1915-ին, հայոց տարագրութեան ամենասեւ թուականին...): Հայ զօրավարներ էին բանակի հրամանատարները... Պատերազմը յայտարարելէն ամիս մը չանցած՝ Լօրիս-Մելիքով առաւ Արտահանը, պաշարեց Կարսը, սպառնաց էրզրումին...

(Շարունակելի)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԵՒԵԼՔԸ

(ԲԱԳՐԵՒԱՆԴ ԵՒ ՍՈՒՐՄԱԼՈՒ)

Գրեց՝ ՌՈՒԲԷՆ

Հայաստանի արեւելեան սահմանը ներկայացնելու համար պէտք է պատկերացնել հիւսիսային կողմը անանցանելի քարոտ եւ անտառոտ լեռներու շղջ մը, ահօսուած խորխոր ձորերով ու հովիտներով: Այդ վիթխարի զանդուածը կազմուած է փոքր կովկասի լեռներով եւ իր մէջ կը պարփակէ Ղարաբաղն ու Սիւնիքը (Տե՛ս «Դրօշակի» մէջ իմ յօդուածները):

Ինչպէս Հայաստանի հիւսիս-արեւելակողմը պաշտպանուած է բնական պատուարով, հարաւ-արեւելքն ալ պաշտպանուած է Վասպուրականով, որտեղ՝ Հայաստանի արեւելքը թանտուրեկէն (10,871 ոտք բարձր) սկսած մինչեւ Տաւրոսի խաչածեւուածը Չաղոռշի հետ՝ կը ներկայացնէ արօտաշատ լեռներու պար մը, ծածկուած մշտասեւ ձիւնով: Ահա ասոնք են Հայաստանի բնական պատնէշները՝ անոր արեւելքի աջ ու ձախ կողմերը:

Իսկ եթէ կ'ուզուի Հայաստանի արեւելեան ամբողջ սահմանը պատկերացնել, այդ պարագային երեւակայեցէք այդ աջ ու ձախ անկիւնապատերու մէջ, այսինքն՝ Սիւնիքի եւ Վասպուրականի մէջտեղը հսկայ աշտարակ մը, ո-

րու դլուխը միշտ կորսուած է ամպերու մէջ: Այդ աշտարակը կը կոչուի Արարատ, իսկ հայոց լեզուով Մեծն Մասիս (16,916 ոտք բարձր): Ենթադրեցէք Մեծն Մասիսը որպէս ամենհի սիւն մը, որուն ձախ կողմէն մեծ դարպաս մը կը բացուի Հայաստանէն դէպի Աւարպատական. դրան շէմքին երեւակայեցէք ըմբոստ ու արագավազ գետ մը: Այս գետը, որ Մասիսի փէշերով կը սլանայ, կը կոչուի Արարատ, որը սահմանն է եղած հայոց աշխարհին:

Մասիսի աջ կողմը մինչեւ թանտուրեկ նորէն բաց դուռ է, թէեւ այս դուռը համեմատաբար աւելի փոքր է քան առաջինը: Այս դրան շէմքը առաջինին նման յորդահոս գետով չէ երիզուած, այլ թզուկ լեռներով, մշտականաչ: Այս բլրաշխարհը Հեր եւ Չարեւանդ գաւառներն են, ներկայ Մակուի լեռները, որոնք ինկած են հսկայ Մասիս-թանտուրեկի ոտքերուն տակ:

Թէեւ շէմքը կայ, բայց դուռը բաց է օտար աշխարհի առջեւ: Այս դռնով Հայաստան կը հաղորդակցի մէկ կողմէն Ատրպատականի հետ, իսկ միւս կողմէ ներս կը մտնէ Արարատ-